Հավելված
Վանաձոր համայնքի ավագանու
« 18 » ապրիլի 2017թ.
թիվ 25-Ն որոշման

«Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
31 մարտի 2017 թվականի N 6-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով՝ ավագանին որոշում է.

1. 1. Սահմանել համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի, ոչ բնակելի և բնակելի տարածքների վարձավճարների չափերն ըստ գոտիների և գործունեության տեսակների՝ համաձայն հավելվածի:

Հավելված

Վանաձոր համայնքի ավագանու

«_31_» _մարտի_ 2017թ.

թիվ _6_ Ն որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԵՐՆ ԸՍՏ ԳՈՏԻՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Գործունեություն (առևտուր, սպասարկում, շուկաների, տոնավաճառների կազմակերպում և այլն) ծավալելու նպատակով հիմնական շինություններ կառուցելու և ոչ հիմնական շինություններ տեղադրելու համար տրամադրված հողամասերի ամսական վարձավճարի չափ սահմանել յուրաքանչյուր 1քմ-ի համար 1-ին գոտում՝400 դրամ, 2-րդ գոտում՝600 դրամ, 3-րդ գոտում՝ 800 դրամ, 4-րդ գոտում՝ 1200 դրամ,

2. Զբոսայգիներում, պուրակներում և Զոր.Անդրանիկի փող. սկզբնամասում գտնվող քաղաքային լճի լճամերձ տարածքում

ա/ բացօթյա սրճարանների և հասարակական սննդի օբյեկտների համար սահմանել վարձավճարի չափ ամսական յուրաքանչյուր 1քմ-ի համար 1-ին գոտում՝80 դրամ, 2-րդ գոտում՝120 դրամ, 3-րդ գոտում՝160 դրամ, 4-րդ գոտում՝240 դրամ,

բ/ կարուսելների, ատրակցիոնների և այլ զվարճանքի խաղերի համար յուրաքանչյուր 1քմ-ի համար սահմանել ամսական վարձավճար. 1-ին գոտում՝40 դրամ, 2-րդ գոտում՝60 դրամ, 3-րդ գոտում՝80 դրամ, 4-րդ գոտում՝120 դրամ,

գ/ կանաչ գոտիների, արահետների և այլ սպասարկման տարածքների յուրաքանչյուր 1քմ-ի համար ամսական վարձավճար սահմանել 1-ին գոտում՝4 դրամ, 2-րդ գոտում՝6 դրամ, 3-րդ գոտում՝ 8 դրամ, 4-րդ գոտում՝12 դրամ,

դ/ այգիների, պուրակների և քաղաքային լճի լճամերձ տարածքում վարձավճարների գանձման ժամկետ սահմանել տվյալ տարվա մայիսի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը:

3. Զանգվածային լրատվամիջոցներին, հասարակական կազմակերպություններին, քաղաքական կուսակցություններին որպես գրասենյակներ օգտագործելու նպատակով տրամադրված ոչ բնակելի տարածքների ամսական վարձավճարի չափ սահմանել յուրաքանչյուր 1քմ-ի համար. 1-ին

գոտում՝100 դրամ, 2-րդ գոտում՝ 150 դրամ, 3-րդ գոտում՝200 դրամ, 4-րդ գոտում՝300 դրամ, բացառությամբ Տիգրան Մեծի 22 հասցեում գտնվող Վանաձորի քաղաքապետարանի վարչական շենքի:

4. Համայնքի սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքներում գործունեություն ծավալելու նպատակով տրամադրված շինությունների ամսական վարձավճարի չափ սահմանել յուրաքանչյուր 1քմ-ի համար 1-ին գոտում՝400 դրամ, 2-րդ գոտում՝600 դրամ, 3-րդ գոտում՝800 դրամ, 4-րդ գոտում՝1200 դրամ:

5. Համայնքի սեփականություն հանդիսացող նկուղների և կիսանկուղների ամսական վարձավճարի չափ սահմանել յուրաքանչյուր 1քմ-ի համար

ա/ կենցաղային նպատակներով հատկացված տարածքների բոլոր 4 գոտիներում ամսական վարձավճարի չափ սահմանել յուրաքանչյուր 1քմ-ի համար 10 դրամ,

բ/ արվեստանոցների համար 1-ին գոտում՝ 20 դրամ, 2-րդ գոտում՝ 30 դրամ, 3-րդ գոտում՝ 40 դրամ, 4-րդ գոտում՝ 50 դրամ, բացառությամբ Տիգրան Մեծի 22 հասցեում գտնվող Վանաձորի քաղաքապետարանի վարչական շենքի,

գ/ առևտրի, սպասարկման և այլ տիպի գործունեություն ծավալելու համար տրամադրված յուրաքանչյուր 1 քմ տարածքի համար վարձավճարի չափ սահմանել 1-ին գոտում՝100 դրամ, 2-րդ գոտում՝200 դրամ, 3-րդ գոտում՝300 դրամ, 4-րդ գոտում՝400 դրամ, բացառությամբ Տիգրան Մեծի 22 հասցեում գտնվող Վանաձորի քաղաքապետարանի վարչական շենքի,

դ/ Տիգրան Մեծի 22 հասցեում գտնվող Վանաձորի քաղաքապետարանի վարչական շենքի համար ամսական վարձավճարի չափ սահմանել յուրաքանչյուր 1քմ-ի համար՝ 600դրամ,

6. Վճարովի ավտոկանգառների համար տրամադրված հողամասերի ամսական վարձավճարի չափ սահմանել յուրաքանչյուր 1քմ-ի համար 1-ին գոտում՝60 դրամ, 2-րդ գոտում՝90 դրամ, 3-րդ գոտում՝120 դրամ, 4-րդ գոտում՝180 դրամ:

7. ա/ Ավտոտնակների և մառանների համար տրամադրված հողամասերի ամսական վարձավճարի չափ սահմանել յուրաքանչյուր 1քմ-ի համար 1-ին գոտում՝ 12 դրամ, 2-րդ գոտում՝ 18 դրամ, 3-րդ և 4-րդ գոտիներում՝ 24 դրամ,

բ/ համայնքի սեփականություն հանդիսացող ավտոտնակների ամսական վարձավճարի սակագներ սահմանել քաղաքի կենտրոնական մասում (Գր.Լուսավորչի, Շիրակացու, Զորյան, Թումանյան փողոցների տարանջատվող մասը՝ ընդգրկելով նաև սահմանային փողոցների երկու կողմերի շենքերը) 1քմ-ի համար՝ 30 դրամ, քաղաքի մնացած տարածքներում 1քմ-ի համար՝ 20 դրամ:

8. Սեփականության իրավունքով վարձակալին պատկանող շենք-շինությունների զբաղեցրած վարձակալության իրավունքով հատկացված հողամասերի տարեկան վարձավճարի չափ սահմանել յուրաքանչյուր 1քմ-ի համար

ա/ իրավաբանական անձանց համար բոլոր 4 գոտիներում տարեկան հողի հարկի դրույքաչափը,

բ/ ֆիզիկական անձանց համար յուրաքանչյուր 1քմ-ի համար տարեկան 1-ին գոտում՝ 400 դրամ, 2-րդ գոտում՝ 600 դրամ, 3-րդ գոտում՝ 800 դրամ, 4-րդ գոտում՝ 1200 դրամ:

9.Տնամերձ հողամասերի, այգեգործական և գյուղատնտեսական նպատակներով վարձակալությամբ տրամադրված հողամասերի տարեկան վարձավճարի չափ սահմանել յուրաքանչյուր 1քմ-ի համար բոլոր 4 գոտիներում՝ 20 դրամ:

10. Վանաձորի համայնքին սեփականության իրավունքով պատկանող էլեկտրահենասյուներին մալուխներ անցկացնելու թույլտվության համար ամսական վարձավճարի չափ սահմանել յուրաքանչյուր հենասյան վրայով մեկ մալուխ անցկացնելու համար բոլոր չորս գոտիներում՝ 100 դրամ, մեկից ավելի մալուխ անցկացնելու դեպքում՝ 70 դրամ:

11. Ապօրինի կառուցված և համայնքի սեփականություն ճանաչված բնակելի տների վարձավճարի չափ սահմանել յուրաքանչյուր 1քմ-ի համար բոլոր չորս գոտիներում, տարեկան՝ 100/հարյուր/ դրամ:

12. Մրցույթով վարձակալության տրամադրվող հողամասերի և ոչ բնակելի տարածքների մեկնարկային սակագին սահմանել տվյալ գոտու ամսական 1քմ-ի վարձավճարի չափով:

13. Արտադրական նշանակության հողամասերի ամսական վարձավճարի չափ սահմանել յուրաքանչյուր 1քմ-ի համար 1-ին գոտում՝ 40դրամ, 2-րդ գոտում՝ 60դրամ, 3-րդ գոտում՝ 80դրամ, 4-րդ գոտում՝ 120դրամ:

14. Այլ նպատակով վարձակալությամբ հատկացված հողամասերի ամսական վարձավճարի չափ սահմանել յուրաքանչյուր 1քմ-ի համար բոլոր գոտիներում՝ 20-ից 100 դրամ:

15. Վանաձորի համայնքին սեփականության իրավունքով պատկանող էլեկտրահենասյուների վրա էներգետիկայի, կապի և այլ ենթակառուցվածքների սարքավորումներ տեղադրելու թույլտվության համար ամսական վարձավճարի չափ սահմանել, յուրաքանչյուր մեկ հենասյան համար բոլոր չորս գոտիներում՝ 1000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԱՍԼԱՆՅԱՆ

ԳԿ ԵՎ ԵՀ ԲԱԺՆԻ
ՊԵՏԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Կ.ՍԱՐՈՅԱՆ